

Ղարադաղի և Մակուի խանութիւնների հայ գիւղերի աւերածութիւնների առիթով հարկաւոր գիմումներն անելուց և Ատրպատականի Սրբ. առաջնորդին հարկաւոր հրահանգները տալուց յետոյ Ամեն. Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը դիմեց Պարսից պետութեան խնամակալին յուլիսի 2-ին հետևեալ հեռագրով.

Նորին Բարձրութեան Պարսից կայսերական խնամակալին.

Խնդրում եմ յարգանօք պաշտպանել Ղարադաղի հայերին և Մակուայ Կարապետանքը (Ս. Թադէոս առաքեալի վանքը), որոնք ենթարկուած են խաների աւերածութեանց։ Տեղակալ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Գէորգ Արքեպիսկոպոս.

Նորին Ամենապատուութիւնը յուլիսի 6-ին տացաւ հետևեալ պատասխանը.

Ամենայն Հայոց կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսին.

Ղարադաղի և Մակուի հայ ժողովրդեան ապահովութիւնը շատ ուշ է իմ սրտին։ Հրաման է արձակուած նրանց բնակավայրերում վերականգնել խաղաղութիւնը և պատժել յանցաւորներին։ Հաւատի եղէք իմ սրտանց բարեացակամութեան։

ԱԲՈՒԼ-ԿԱՍԷՄ ՐԵԳԵՆՏ